ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1122

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0272-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00381 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՔՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0272-0031 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,00381 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2004 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026GEAEJF և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06011P9F8QKE)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0272-0031 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,00381 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 32,00 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0272-0031 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,00381 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինության հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ա. Մանուկյան փողոց, 2-րդ նրբանցք 5/1 ավտոտնակ» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու հասմար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Մարինե Մարտունի Յարմալոյանին (ծնված՝ 18.01.1973թ.) օրինականացված կառույցն և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Իննա Կարապետյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026 թ. № 1123

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի ԹԻՎ 909 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի 2026 թվականի սեպտեմբերի 5-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-05092026-06-0004 որոշումը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 4-ի «Արսեն Հրանտի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու, անշարժ գույքի հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 909 որոշման 1-ին կետում գրված «34,20» թիվը փոխարինել «24,10» թվով, իսկ 6-րդ կետում գրված «361 442,64» թիվը փոխարինել «344 419,92» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբեր 2026թ. № 1124

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԵՎ ԵԲՐԱՔՍԻԱ ՎԱՂԻՆԱԿԻ ՏՈՆՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Համբարձում Վարազդատի Մարկոսյանի և Եբրաքսիա Վաղինակի Տոնոյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0041-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,1000 հեկտար մակերեսով հողամասը Համբարձում Վարազդատի Մարկոսյանին և Եբրաքսիա Վաղինակի Տոնոյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1996 թվականին կառուցված բնակելի տունը, նկուղը և հարթակը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի

հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172H94CVNG) և Համբարձում Վարազդատի Մարկոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Օրենքի ուժով ճանաչել Համբարձում Վարազդատի Մարկոսյանի (ծնված՝ 18.05.1957թ.) և Եբրաքսիա Վաղինակի Տոնոյանի (ծնված՝ 26.11.1961թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0041-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1000 հեկտար մակերեսով հողամասի, 89,27 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 93,79 քառակուսի մետր մակերեսով նկուղի և 14,08 քառակուսի մետր մակերեսով հարթակի նկատմամբ:

2. Համբարձում Վարազդատի Մարկոսյանի և Եբրաքսիա Վաղինակի Տոնոյանի կողմից տիրապետվող 06-095-0041-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,1000 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Ջրաշեն, 1-ին փողոց, 66 բնակելի տուն» հասցեն:

3. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-095-0041-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,1000 հեկտար հողամասի և դրա վրա գտնվող շինությունների հատակագիծը:

4. Համբարձում Վարազդատի Մարկոսյանին և Եբրաքսիա Վաղինակի Տոնոյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասի վրա առկա ինքնակամ կառույցները՝ 21.08 քառակուսի մետր մակերեսով անասնագոմը, 4,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 1,08 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը և 0,72 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպն օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026 թ. № 1125

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0012-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,09976 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1113 որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0012-0009 կադաստրային ծածկագրով 0,09976 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1126

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0032-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,052 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 2-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյանում թիվ 1962, թիվ 1963), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172X2SWYP4) և Գերասիմ Յուրիկի Տոնիկյանի (ծնված՝ 24.10.1973թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0032-0008 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 117,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 10-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 4 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1127

06-006-0501-0056 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով 2026 թվականի օգոստոսի 27-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 1899) , Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011PASHXWA) և Հայկազ Սայադի Դավոյանի (ծնված՝ 01.12.1969 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 06-006-0501-0056 կադաստրային ծածկագրով բազմաբնակարան բնակելի շենքի 59,50 քառակուսի մետր մակերեսով բնակարանի «Լոռու մարզ, ք. Սպիտակ Թորոսյան փողոց, Կենտրոն 1 թաղ., 19 ա շենքի 3 բնակարան» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Շ. Թորոսյան փողոց, 6 շենք, 3 բնակարան» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1128

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0126-0118 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,056 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0126-0118 կադաստրային ծածկագրով 0,056 հեկտար մակերեսով տրամադրված «Մարզ Լոռի, ք. Սպիտակ, Կոմունալկա թաղամասի թիվ 7 բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով թիվ ԼԴ/0999/02/25 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 3-ի վճիռը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 0601126BGLPM) և Մելանյա Էրեգլոյի Նավասարդյանի (ծնված՝ 15.01.1952թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0126-0118 կադաստրային ծածկագրով 0,056 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության «Մարզ Լոռի, ք. Սպիտակ, Կոմունալկա թաղամասի թիվ 7 բնակելի տուն» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Տաշիր թաղամասի 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 14 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1129

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0012-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,30202 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1954309 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011JWYEJSN) և Հմայակ Եսայիի Հակոբյանի (ծնված՝ 01.05.1963 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0012-0043 կադաստրային ծածկագրով 0,30202 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ս. Ավետիսյան փողոց, 12-րդ նրբանցք, 7 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1130

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-098-0077-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,216 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01092026-06-0057 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06202RMGKWHV) և Իզոլդա Ռուբենի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ստանիսլավ Մելսիկի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող 06-098-0077-0018 կադաստրային ծածկագրով 0,216 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Համայնք Սպիտակ, գյուղ Սարամեջ, 9-րդ փողոց, 2-րդ փակուղի, 2 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1824):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1131

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0247-0186 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 8-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 2038), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011RHGG8KR) և Լուսինե Վարուժանի Խաչիկյանի ներկայացուցիչ Արմեն Ռուբիկի Մովսիսյանի դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0247-0186 կադաստրային ծածկագրով 0,1 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Այգեստան թաղամասի 3-րդ փողոց, 30/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1132

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0032-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,054 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 2-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյանում թիվ 1962, թիվ 1963), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172BGXJXAM) և Գերասիմ Յուրիկի Տոնիկյանի (ծնված՝ 24.10.1973թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0032-0007 կադաստրային ծածկագրով 0,054 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 118,4 քառակուսի մետր մակերեսով նկուղին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 10-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 6 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1133

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0043-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,13 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 916520 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06112ARLGTMK) և Արմեն Ժորայի Ամիրբեկյանի (ծնված՝ 15.12.1969թ.) դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող 06-052-0043-0006 կադաստրային ծածկագրով 0,13 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 88,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 100,8 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Կաթնաջուր, 5-րդ փողոց, 5 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1134

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0005-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,136 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1478154 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 061728CBYBJL) և Նարինե Սամվելի Բադիկյանի (ծնված՝ 04.04.1983թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0005-0010 կադաստրային ծածկագրով 0136 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 3-րդ փողոց, 2 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1135

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0027-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,129 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1837213 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172GTZQFNS) և Նարինե Սամվելի Բադիկյանի (ծնված՝ 04.04.1983թ.) դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0027-0003 կադաստրային ծածկագրով 0,129 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 99,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 11 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1136

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0084-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6,58192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0084-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված գյուղատնտեսական նպատակային նշանակության 6,58192 հեկտար մակերեսով 2-րդ կարգի ջրովի վարելահող հողատեսքի հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026 թ. № 1137

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ 06-006-0087-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 1043 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1043 որոշմամբ հաստատվել է անշարժ գույքի ճշգրտված հատակագիծ, որում առկա են եղել անհամապատասխանություններ, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 2026 թվականի սեպտեմբերի 17-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-17092026-06-0298 որոշումը, «ՌՈՒՍՏԱՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Սասուն Նորիկի Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով փոխանցված «ՀՀ, մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս 188 անասնապահական համալիր» հասցեում գտնվող 06-006-0087-0003 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 18,8 հեկտար մակերեսով արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների ճշգրտված հատակագիծը:

2. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առուվաճառքի պայմանագրով փոխանցված 06-006-0087-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը հաստատելու և Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 3-ի թիվ 901 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1043 որոշումը:

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1138

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0044-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,109 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 2-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյանում թիվ 1962, թիվ 1963), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06172NHQFGXX) և Գերասիմ Յուրիկի Տոնիկյանի (ծնված՝ 24.10.1973թ.) դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0044-0009 կադաստրային ծածկագրով 0,109 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 42 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2026թ. № 1139

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, տարեցների միջազգային օրվա կապակցությամբ տորթեր, շոկոլադե կոնֆետների հավաքածուներ և նվերի տոպրակներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 30 000 ՀՀ դրամ:

2. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 9 700 ՀՀ դրամ:

3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«30» սեպտեմբերի 2026թ. № 1140

ՆՎԵՐ ԻՍԿԱՆԴԱՐԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրի բնակիչ Նվեր Իսկանդարի Վիրաբյանի ներկայացուցիչ Սոնա Չիլինգարյանը 2026 թվականի սեպտեմբերի 4-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով կատարել 06-049-0042-0002 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա բնակելի տան հիմքերի վերականգնում և հաստատել հողամասի և բնակելի տան հատակագծերը:

Քննարկելով Նվեր Իսկանդարի Վիրաբյանի դիմումը՝ գտնում եմ, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումն իրականացվում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ հանրության գերակա շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում

քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, կամ

3) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա. բնակելի տները պետք է կառուցված լինեն մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա լինեն,

բ. բնակելի տների և դրանցով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ փաստացի առկա սահմանազատված հողամասերի նկատմամբ պետք է պահպանված չլինեն քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը,

գ. դրանք չպետք է կառուցված լինեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չպետք է հակասեն քաղաքաշինական նորմերին, չառաջացնեն սերվիտուտ,

դ. ֆիզիկական անձը պետք է տիրապետի բնակելի տունը՝ որպես սեփական գույք:

Այսինքն, նշված պայմաններից թեկուզ մեկ պայմանի բացակայությունը անհնարին է դարձնում օրենքի ուժով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը:

Տվյալ պարագայում 06-049-0042-0002 կադաստրային ծածկագրով հողամասի և դրա վրա կառուցված ավտոտնակների և անասնագոմի նկատմամբ 2003 թվականի

սեպտեմբերի 2-ին Ծաղկաբերի հողի սեփականաշնորհման հանձնաժողովի 20.03.1991 թվականի թիվ 8 որոշման հիման վրա կատարվել է Նվեր Վիրաբյանի, Հրանուշ Վիրաբյանի, Մուրադ Վիրաբյանի, Երվանդ Վիրաբյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցում և տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1648863 վկայականը, որում դիմումատուի նշած բնակելի տունն արտացոլված չէ:

06-049-0042-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ սեփականության իրավունքի պետական գրանցման ժամանակ առկա փաստաթղթերում բնակելի տան վերաբերյալ տեղեկություն առկա չէ:

Բացի այդ, կադաստրային գործում առկա է 2024 թվականին կատարված անշարժ գույքի չափագրման հաշվետվություն, համաձայն որի բնակելի տունը չափագրված է որպես ինքնակամ կառույց:

Չափագրման հաշվետվության մեջ բնակելի տունը 1965 թվականին կառուցված լինելու փաստը հակասում է կադաստրային գործում առկա մյուս փաստաթղթերին, համաձայն որոնց բնակելի տուն առկա չէ:

Այսպիսով, բացակայում են բնակելի տունը մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված լինելու, քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը պահպանված չլինելու պայմանները, որպիսի պարագայում չի կարող բնակելի տունը օրենքի ուժով ճանաչվել դիմումատուի սեփականություն:

Բացի այդ ինքնակամ կառույցների նկատմամբ իրավունքների ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչը ևս բացառում է դիմումատուի վկայակոչած բնակելի տան նկատմամբ իրավունքի ճանաչումը օրենքի ուժով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ և 55-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Նվեր Իսկանդարի Վիրաբյանի 2026 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նվեր Իսկանդարի Վիրաբյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 30
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2026թ. № 1141

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0022-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,092 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 447536 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06072AKW9PKT) և Արթուր Դավիթի Սիրունյանի (ծնված՝ 04.03.1989թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող 06-042-0022-0015 կադաստրային ծածկագրով 0.092 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Լեռնավան, 5-րդ փողոց, 19 հողամաս » հասցեն (փոստային դասիչը՝ 1811):

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2026 թ. № 1142

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄՈՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԵՐԳՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 0,0636 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հաշվի առնելով, Սիմոն Գուգենի Սերգոյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,16360 հեկտար մակերեսով հողամասի 0,1000 հեկտարը Սիմոն Գուգենի Սերգոյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,0636 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1989 թվականին կառուցված բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 147-Ա որոշումը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը

(քաղվածք՝ 06052H4LDLCM) և Սիմոն Գուգենի Սերգոյանի (ծնված՝ 03.07.1961 թ.)դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվողղ, բնակավայրերի նպատակային նշանակության 06-030-0024-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,16360 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Օրենքի ուժով ճանաչել Սիմոն Գուգենի Սերգոյանի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1000 հեկտար մակերեսով հողամասի և 77,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ:

3. Սիմոն Գուգենի Սերգոյանի կողմից տիրապետվող 0,1000 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,0636 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 58 766,4 ՀՀ դրամ (1 քմ 92,4 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սիմոն Գուգենի Սերգոյանին:

4. Սիմոն Գուգենի Սերգոյանի կողմից տիրապետվող 06-030-0024-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,16360 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Գոգարան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 11 բնակելի տուն» հասցեն:

5. Հաստատել Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,16360 հեկտար հողամասի և դրա վրա գտնվող շինության հատակագիծը:

6. Սիմոն Գուգենի Սերգոյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

7. Սիմոն Գուգենի Սերգոյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 5-րդ կետում նշված հողամասի վրա առկա ինքնակամ կառույցը՝ 23,40 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 12,20 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2026թ. № 1143

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0124-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1100 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդված 1-ին կետով, 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով և 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 33-րդ և 50-րդ կետերով, հաշվի առնելով, որ թիվ ԼԴ4/0030/02/23 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2025 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ ճանաչվել է Էդուարդ Արարատի Աջամյանի (իրավահաջորդ՝ Էդգար Էդուարդի Աջամյան) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0124-0007 կադաստրային ծածկագրով հողամասի վրա գտնվող կիսակառույց շինության նկատմամբ, 06-006-0124-0007 կադաստրային ծածկագրով 0,1100 հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը համատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով թիվ ԼԴ4/0030/02/23 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2025 թվականի ապրիլի 23-ի որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի

հաստատումը (քաղվածք՝ 06011K5MYW4Z) և Էդգար Էդուարդի Աջամյանի ներկայացուցիչ Վիկտորյա Էդիկի Ալեքսանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և ճանաչել Էդգար Էդուարդի Աջամյանի (ծնված՝ 26.11.1979) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0124-0007 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության 0,1100 հեկտար մակերեսով այլ արտադրական նշանակության օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Հաստատել 06-006-0124-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, ք.Սպիտակ, 5 շինություն» հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 01 » հոկտեմբերի 2026թ. № 1144

«ՄԻ ՍԱՐ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Մի Սար» Կրթամշակութային բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Արևիկ Թանաշեանի 23.09.2026 թվականի թիվ Ա 046/2026 գրությունը, «Մի Սար» Կրթամշակութային բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համերգային ծրագրի իրականացման նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 400 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2026 թվականի N 1145

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՀԱՐՈՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 85-րդ կետով, հաշվի առնելով, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 1032 որոշմամբ հայտարարված մրցույթը կայանալու է 2026 թվականի հոկտեմբերի 13-ին, հիմք ընդունելով Քրիստինե Ահարոնի Ավագյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Ահարոնի Ավագյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգել մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2026թ. № 1146

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԹԻՎ 611 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 22-ի «Էլեկտրոնային համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման նպատակով համակարգից օգտվողների ու պատասխանատու անձանց անհատական կազմը հաստատելու և նրանց գործառույթները սահմանելու մասին» թիվ 611 որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետում գրված «Նարինե Սահակյան - Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Մելինե Հարությունյան - Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«02» հոկտեմբերի 2026թ. № 1147

ԱՇՈՏ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշոտ Մերուժանի Ասատրյանը 2026 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացրել է վարչական բողոք, որով պահանջել է անվավեր ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 12-ի թիվ 944 որոշումը:

Քննարկելով վարչական բողոքը և վարչական բողոքի շրջանակներում ուսումնասիրելով վարչական իրավախախտման գործում առկա ապացույցները՝ գտնում եմ, որ վարչական բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, իսկ Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 12-ի թիվ 944 որոշումն իրավաչափ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ ***որոշում եմ***.

1. Աշոտ Մերուժանի Ասատրյանի վարչական բողոքը մերժել՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 12-ի թիվ 944 որոշումը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Աշոտ Մերուժանի Ասատրյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Մերուժանի Ասատրյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 02
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 02 » հոկտեմբերի 2026թ. № 1148

«ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ» ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, «Ուսուցչի օր» տոնի առթիվ հյուրասիրություն, ծաղիկներ և ծաղկային կոմոզիցիա ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեի «Հանրակրթական ուսուցում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 183 400 ՀՀ դրամ, իսկ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 90 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 05 » հոկտեմբերի 2026թ. № 1149

«ԲԱԶՈՒՄ-ՍՊԻՏԱԿ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԹԻՄԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության «Բազում-Սպիտակ» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպության նախագահ Գոռ Բարսեղյանի դիմումը, 2026-2027թթ. մինչև 11 տարեկանների Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի պատանիների առաջնությանը մասնակցելու նպատակով ֆուտբոլի թիմին ճանապարհածախս տրամադրելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդվող կազմակերպություններ» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 100 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հոկտեմբերի 2026թ. № 1150

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 06-006-0495-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,065 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և 29.09.2026թ. թիվ 146 եզրակացությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072026-06-0019 վկայականը և Լևոն Անդրանիկի Տոնոյանի (ծնված՝ 07.12.1989թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող Լևոն Անդրանիկի Տոնոյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-006-0495-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հոկտեմբերի 2026թ. № 1151

ԿԱՐԻՆԵ ՀՄԱՅԱԿԻ ԱՋԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0103-0016 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,456 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Կարինե Հմայակի Աջամյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 07102025-06-0059) և գնման նախապատվության իրավունքով հնարավոր է օտարել ուղղակի վաճառքով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 9-ի թիվ 70-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07102025-06-0059 և 29092026-06-0068 վկայականները և Կարինե Հմայակի Աջամյանի ներկայացուցիչ Վիկտորյա Էդիկի Ալեքսանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարինե Հմայակի Աջամյանին վարձակալության իրավունքով տրամադրված, Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0103-0016 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,456 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով՝ 308940 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 67,75 ՀՀ դրամ), ուղղակի վաճառքով օտարել Կարինե Հմայակի Աջամյանին:

2. Կարինե Հմայակի Աջամյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հոկտեմբերի 2026թ. № 1152

ԿԱՐԻՆԵ ՀՄԱՅԱԿԻ ԱՋԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0125-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,529 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Կարինե Հմայակի Աջամյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 07082020-06-0033) և գնման նախապատվության իրավունքով հնարավոր է օտարել ուղղակի վաճառքով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 9-ի թիվ 69-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07082020-06-0033 և 29092026-06-0065 վկայականները և Կարինե Հմայակի Աջամյանի ներկայացուցիչ Վիկտորյա Էդիկի Ալեքսանյանի դիմումը՝ ***որոշում եմ***

1. Կարինե Հմայակի Աջամյանին վարձակալության իրավունքով տրամադրված, Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0125-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,529 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով՝ 358397,5 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 67,75 ՀՀ դրամ), ուղղակի վաճառքով օտարել Կարինե Հմայակի Աջամյանին:

2. Կարինե Հմայակի Աջամյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» հոկտեմբերի 2026թ. № 1153

ԿԱՐԻՆԵ ՀՄԱՅԱԿԻ ԱՋԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0128-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,58234 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Կարինե Հմայակի Աջամյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 06112025-06-0036) և գնման նախապատվության իրավունքով հնարավոր է օտարել ուղղակի վաճառքով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 9-ի թիվ 68-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06112025-06-0036 և 29092026-06-0041 վկայականները և Կարինե Հմայակի Աջամյանի ներկայացուցիչ Վիկտորյա Էդիկի Ալեքսանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարինե Հմայակի Աջամյանին վարձակալության իրավունքով տրամադրված, Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում գտնվող 06-068-0128-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,58234 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասը շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով՝ 394535,35 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 67,75 ՀՀ դրամ), ուղղակի վաճառքով օտարել Կարինե Հմայակի Աջամյանին:

2. Կարինե Հմայակի Աջամյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 5
ք.Սպիտակ